ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 469-Ա
06 սեպտեմբերի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 04-Ի ԹԻՎ 179-Ա , 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի ԹԻՎ 322-Ա , ԹԻՎ 323-Ա, ԹԻՎ 324-Ա, 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի ԹԻՎ 329-Ա , ԹԻՎ 330-Ա ԵՎ ԹԻՎ 331-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի գնումների համակարգող Կարեն Նալբանդյանի կողմից 2022 թվականի սեպտեմբերի 06-ին ներկայացված զեկուցագիրը. ***որոշում եմ՝***

Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2022 թվականի մայիսի 04-ի <<Պատասխանատու ստորաբաժանում և գնումների համակարգող սահմանելու մասին>> թիվ 179-Ա, 2022 թվականի հունիսի 28-ի <<Պատասխանատու ստորաբաժանում և գնումների համակարգող սահմանելու մասին>> թիվ 322-Ա, թիվ 323-Ա, թիվ 324-Ա, 2022 թվականի հունիսի 29-ի <<Պատասխանատու ստորաբաժանում և գնումների համակարգող սահմանելու մասին>> թիվ 329-Ա, թիվ 330-Ա, թիվ 331-Ա որոշումները:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի պարտականությունները կատարող՝ Մ. Դարբինյան

2022 թվականի սեպտեմբերի 06
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 470-Ա

06 սեպտեմբերի 2022 թվական

ԿՅԱՆՔԻ ԴԺՎԱՐԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ՀԱՅՏՆՎԱԾ ԱՆՈՒՇ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԵՎ ԱՐԹՈՒՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԽՆԱՄՔԸ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովն անչափահասներ Անուշ Կարապետյանի /ծնված 25.03.2008 թվականին/ և Արթուր Կարապետյանի /ծնված 03.12.2012թվականին/ խնամքը և դաստիարակությունը կազմակերպելու նպատակով կատարված ուսումնասիրությունների արդյունքում եզրակացրել է, որ անչափահասներ Անուշ Կարապետյանի և Արթուր Կարապետյանի խնամքը և դաստիարակությունը կենսաբանական ընտանիքում անհնար է, քանի որ Նարինե Կարապետյանը և անչափահաս երկու երեխաները բնակվում են վարձակալական հիմունքներով բնակարանում: Բնակարանի սեփականատերը Նարինե Կարապետյանին տեղեկացրել է, որ բնակարանը վաճառում է: Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանը բնակարանային ֆոնդում չունի ազատ բնակարան, որպեսզի Նարինե Կարապետյանի ընտանիքին ապահովի բնակարանով:Նարինե Կարապետյանի և Անի համայնքապետարանի աշխատակիցների կողմից ձեռնարկվել են բազմաթիվ քայլեր վարձակալական հիմունքներով բնակարան վարձակալելու համար, սակայն ապարդյուն: Նարինե Կարապետյանը և երկու անչափահաս երեխաները բնակարանի վաճառքից հետո կհայտնվեն դրսում և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի 631-Ն որոշման III գլխի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից 2022 թվականի սեպտեմբերի 05-ի եզրակացությունը, *որոշում եմ*՝

Անչափահասներ Անուշ Կարապետյանի /ծնված 25.03.2008 թվականին, Արթուր Կարապետյանի /ծնված 03.12.2012 թվականին/ հետագա խնամքը և դաստիարակությունը ժամանակավորապես կազմակերպել <<Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի պարտականությունները կատարող՝ Մ. Դարբինյան

2022 թվականի սեպտեմբերի 06
Քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՀայաստանիՀանրապետության Շիրակիմարզի Անիհամայնք
ՀայաստանիՀանրապետությանՇիրակի մարզ, քաղաքՄարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 471-Ա

08 սեպտեմբերի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Մուշեղ Հովհաննեսի Գրիգորյանի (անձնագիր AT 0231222, տրված 25.07.2019 թվականին, 022 կողմից) կողմից ներկայացված դիմումը:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Սառնաղբյուր բնակավայրի 1-ին փողոց 1-ին նրբանցք 1-ին անցուղի թիվ 1/2 հասցեում գտնվող հողամասի մակերեսը փաստացի կազմում է 0,02355 հեկտար, որը սեփականության իրավունքով Մուշեղ Հովհաննեսի Գրիգորյանի (ծնված՝ 17.05.1962 թվական), Գևորգ Մուշեղի Գրիգորյանի (ծնված՝ 29.10.1990 թվական), Հասմիկ Ավետիքի Բարակեզյանի (ծնված՝ 10.09.1969 թվական) պատկանող հողամասն է՝ (հիմք՝ հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 1991 թվականի մայիսի 24-ի թիվ 1 որոշում):

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Սառնաղբյուր բնակավայրի 1-ին փողոց 1-ին նրբանցք 1-ին անցուղի թիվ 1/2 հասցեում բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված պահանջներին, հողամասը ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով <<Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի դրույթներով, ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Սառնաղբյուր բնակավայրի 1-ին փողոց 1-ին նրբանցք 1-ին անցուղի թիվ 1/2 հասցեում գտնվող Մուշեղ Հովհաննեսի Գրիգորյանի (ծնված՝ 17.05.1962 թվական), Գևորգ Մուշեղի Գրիգորյանի (ծնված՝ 29.10.1990

թվական), Հասմիկ Ավետիքի Բարակեզյանի (ծնված՝ 10.09.1969 թվական) բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար օրինական հատկացված 0,02355 հեկտար մակերեսով հողամասը ճանաչել նրանց սեփականությունը և դրա վրա գտնվող մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված շենք-շինությունների նկատմամբ:

2. Թիվ 2 շինությունը թողնել ինքնակամ:

3. Հողամասի սահմանները որոշվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի պարտականությունները կատարող՝ Մ. Դարբինյան

2022 թվականի սեպտեմբերի 08
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 472-Ա

08 սեպտեմբերի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԱՆՋԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՋԱՎԱՀԻՐ ՄՈՒՐԱԴԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՐԱԿԱԼԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ սահմանված կարգի 28-րդ կետի և 29-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Ջավահիր Մուրադի Հովհաննիսյանի դիմումը. ***որոշում եմ՝***

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Լանջիկ բնակավայրում գտնվող /կադաստրային ծածկագիր 08-044-031-001/ Ջավահիր Մուրադի Հովհաննիսյանին պատկանող բնակելի տանը տրամադրել հետևյալ հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Անի համայնք, Լանջիկ բնակավայր, 8-րդ փողոց, թիվ 1 հասցե:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի
համայնքի ղեկավարի պարտականությունները կատարող՝ Մ. Դարբինյան

2022 թվականի սեպտեմբերի 08
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՀայաստանիՀանրապետության Շիրակիմարզի Անիհամայնք
ՀայաստանիՀանրապետությանՇիրակի մարզ, քաղաքՄարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 473-Ա

08 սեպտեմբերի 2022 թվական

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 7-րդ կետի 1-ին ենթակետի «ա» և «բ» պարբերության, 8-րդ կետի, 12-րդ կետի 2-րդ ենթակետի և 20-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով, ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի կողմից «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի կարիքների համար Ձիթհանքով բնակավայրի գերեզմանատան պարիսպի նորոգման աշխատանքների» ձեռքբերման նպատակով պատասխանատու ստորաբաժանում սահմանել հետևյալ կազմով.
Հանձնաժողովի նախագահ՝ Գեղամ Գրիգորյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար
Անդամներ՝ Մարտիրոս Դարբինյան -Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի տեղակալ
Արսեն Գասպարյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Անի կոմունալ տնտեսություն» համայնքային բյուջետային հիմնարկի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար:
2.Սույն որոշման 1-ին կետով նախատեսված գնումների կատարման նպատակով գնումների համակարգողի լիազորությունները վերապահել Կարեն Նալբանդյանին:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի պարտականությունները կատարող Մ. Դարբինյան

2022 թվականի սեպտեմբերի 08
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՀայաստանիՀանրապետության Շիրակիմարզի Անիհամայնք
ՀայաստանիՀանրապետությանՇիրակի մարզ, քաղաքՄարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 474-Ա

08 սեպտեմբերի 2022 թվական

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 7-րդ կետի 1-ին ենթակետի «ա» և «բ» պարբերության, 8-րդ կետի, 12-րդ կետի 2-րդ ենթակետի և 20-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով, ***որոշում եմ***՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի կողմից «Հայստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի կարիքների համար ճանապարհային գծանշման աշխատանքների» ձեռքբերման նպատակով պատասխանատու ստորաբաժանում սահմանել հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝ Մարտիրոս Դարբինյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի տեղակալ

Հանձնաժողովի անդամներ՝ Արսեն Գասպարյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Անի կոմունալ տնտեսություն» համայնքային բյուջետային հիմնարկի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Առաքել Հայրապետյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի ծառայողական ավտոմեքենայի վարորդ

Յուրա Հայրապետյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Անի կոմունալ տնտեսություն» համայնքային բյուջետային հիմնարկի ավտոպարկի պատասխանատու-մեխանիկ:

2.Սույն որոշման 1-ին կետով նախատեսված գնումների կատարման նպատակով գնումների համակարգողի լիազորությունները վերապահել Կարեն Նալբանդյանին:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի

պարտականությունները կատարող Մ. Դարբինյան

2022 թվականի սեպտեմբերի 08
քաղաք Մարալիկ